«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 12
22.07.2021թ.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորատի կանոնակարգի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ ռեկտորատի կանոնակարգը:

2. ՀԱԱՀ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները հաստատելու վերաբերյալ.

2.1. Հաստատել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

2.2. Հաստատել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

2.3. Հաստատել ագրոնոմիական ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

2.4. Հաստատել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

2.5. Հաստատել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

2.6. Հաստատել ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի տարեկան հաշվետվությունը:

2.7. Հաստատել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի տարեկան հաշվետվությունը:

2.8. Հաստատել ՀԱԱՀ Անտոն Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տարեկան հաշվետվությունը:

2.9. Հաստատել ՀԱԱՀ Շիրակի ակ. Մ.Գ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի տարեկան հաշվետվությունը:

2.10. Հաստատել ՀԱԱՀ ագրոբիզնեսի դեպարտամենտի տարեկան հաշվետվությունը:

2.11. Հաստատել հեռակա ուսուցման դեպարտամենտի տարեկան հաշվետվությունը:

2.12. Հաստատել ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տարեկան հաշվետվությունը:

3. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 2019-2020 ուսումնական պլանով առկա ուսուցման մագիստրոսի կրթական աստիճանի 031802.00.7 «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության 031802.04.7 «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի ուսումնական պլանի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 2019-2020 ուսումնական պլանով առկա ուսուցման մագիստրոսի կրթական աստիճանի 031802.00.7 «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության 031802.04.7 «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի ուսումնական պլանը:

4. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2019 և 2020թ ուս. պլաններում առարկաների անվանափոխության հարցի վերաբերյալ.

4.1. 2019թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Կաթի և կաթնամթերքների, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (5-րդ կիսամյակ առկա, 6-րդ կիսամյակ հեռակա) և 2020թ. ուսումանական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (5-րդ կիսամյակ առկա, 6-րդ կիսամյակ հեռակա)՝ «Կաթի արտադրություն» կամընտրային առարկան անվանափոխել՝ «Թթու կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիա» անվանումով:

4.2. 2019թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Մսի և մսամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրում (5-րդ կիս. առկա, 6-րդ կիս. հեռակա) և 2020թ ուսումանական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրում (5-րդ կիսամյակ առկա, 6-րդ կիսամյակ հեռակա)՝ «Մսի արտադրություն» կամընտրային առարկան անվանափոխել՝ «Երշիկեղենի և հումաղադրված մթերքների արտադրության տեխնոլոգիա» անվանումով:

4.3. 2019թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Կաթի և կաթնամթերքների, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (6-րդ կիսամյակ առկա, 8-րդ կիսամյակ հեռակա) և 2020թ. Ուսումանական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (6-րդ կիսամյակ առկա, 8-րդ կիսամյակ հեռակա)՝ «Մակարոններ» կամընտրային առարկան անվանափոխել՝ «Կաթնային պահածոների արտադրության տեխնոլոգիա» անվանումով:

4.4. 2019թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Ձկան և ձկնամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (5-րդ կիսամյակ առկա) և 2020թ. ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (5-րդ կիս. առկա, 8-րդ կիս. հեռակա)՝ «Ձկան արտադրություն» առարկան անվանափոխել՝ «Ծխեցված և չորացված ձկնամթերքի արտադրության տեխնոլոգիա» անվանումով:

4.5. 2019թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Հացի հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրում (5-րդ կիսամյակ առկա, 6-րդ կիսամյակ հեռակա) և 2020թ ուսումնական պլանի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրում» (5-րդ կիսամյակ առկա, 6-րդ

կիսամյակ հեռակա) «Հացի և հրուշակեղենի արտադրություն» կամընտրային առարկան անվանափոխել՝ «Հացի և մակարոնեղենի արտադրություն» անվանումով:

5. Էլեկտրոնային թեստային համակարգով անցկացվող քննությունների կազմակերպման ուսանողի ուղեցույցի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել Էլեկտրոնային թեստային համակարգով անցկացվող քննությունների կազմակերպման ուսանողի ուղեցույցը:

6. ՈՒսումնական ձեռնարկների, աշխատությունների՝ տպագրության երաշխավորման հարցի վերաբերյալ.

6.1. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի» ամբիոնի կողմից ներկայացված «Նյութերի դիմադրություն» վերնագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության (հեղինակներ՝ Ս. Դավեյան, Ա. Թարվերդյան, Ա. Մինասյան և Է. Կոսեմյան):

6.2. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի «Հասարակական գիտությունների» ամբիոնի կողմից ներկայացված «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում 1991-2016 թվականներին» վերնագրով աշխատությունը երաշխավորել տպագրության (հեղինակ՝ Մ. Նաջարյան):

7. Տպագրված ձեռնարկների՝ ուսումնական գործընթացում որպես օգտագործվող հիմնական և լրացուցիչ գրականություն ճանաչման հարցի վերաբերյալ.

Ագրոնոմիական ֆակուլտետի «Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության» ամբիոնի կողմից ներկայացված Գ. Ավագյանի, Գ. Պետրոսյանի և Ա. Ներսիսյանի համահեղինակությամբ 2017թ.-ին հրատարակված «Ինտեգրացված պայքար Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել տարածված ու վնասակար հիվանդությունների և վնասատուների դեմ», ինչպես նաև Գ. Ավագյանի հեղինակությամբ 2020թ-ին հրատարակված «Խաղողի վազի վնասակար օրգանիզմները և դրանց դեմ պայքարի ինտեգրացված միջոցառումները» անվանումով ձեռնարկը ճանաչել որպես ուսումնական գործընթացում օգտագործվող հիմնական և լրացուցիչ գրականություն:

8. Թեկնածուական ատենախոսությունները հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ.

8.1. Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Վարդան Վալերիի Բեգլարյանի «Հողի մեքենայական դեգրադացիայի կանխարգելման բանվորական օրգանի մշակում» անվանումով, Ե.20.01. – «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

8.2. ՀԱԱՀ ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի հեռակա ասպիրանտ Հայկ Հմայակի Հայրապետյանի «Հողակոշտերի ռոտորային մանրիչով կարտոֆիլահանի մշակում և պարամետրերի հիմնավորում» անվանումով, Ե.20.01. – «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

9. ՀԱԱՀ հայցորդների ձևակերպման, ատենախոսական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցի վերաբերյալ.

9.1. Տիգրան Սամսոնի Չիչակյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ ԱՃՖ ջրային ռեսուրսների կառավարման ամբիոնում, ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Ոռոգման համակարգի նախագծման արդյունավետության բարձրացման ուղիները թվային տեխնոլոգիաների կիրառմամբ» ձևակերպումով՝ Զ.01.01 – «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ, իսկ աշխատանքի գիտական ղեկավար հաստատել գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մարկոսի Եղիազարյանին:

9.2. Կարեն Ռաֆիկի Ժամհարյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ ԱԲԱՖ անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնում, ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Արհեստական լճակային տնտեսություններում աճեցված ձկան սանիտարական փորձաքննությունն անասնաբուժական դեղամիջոցների մնացորդների առկայության դեպքում» ձևակերպումով՝ ԺԶ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ, իսկ աշխատանքի գիտական ղեկավար հաստատել անաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Վահանի Աբրահամյանին:

9.3. Լուսինե Համազասպի Ծպնեցյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ ԱՏՖ ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնում, ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» ձևակերպումով՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, իսկ աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տնտես. թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ